Հայաստանի կենսաբ. հանդես, 1(63), 2011

ԾՈՎԱԿ ՄԻՆԱՍԻ ԱՎԱԳՅԱՆ
(1926-2011)

Կյանքի 85-րդ տարում իր մահկանացուն կնքեց Կենսաֆիզիկայի համահայկական ընկերության նախագահ, Ռուսաստանի ԳԱ ճառագայթային կենսաբանության Գիտական խորհրդի անդամ, կենսաբանական գիտությունների դոկտոր Ծովակ Մինասի Ավագյանը: Ծովակ Ավագյանը ծնվել է 1926 թ. հունիսի 24-ին Երևանում: 1952 թվականին ավարտել է Մոսկվայի կապի ինժեներների ինստիտուտի ռադիոտեխնիկայի ֆակուլտետը, 1956-58 թթ. սովորել է ասպիրանտուրայում, այնուհետև աշխատել Հայաստանի ԳԱ Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտում: 1968 թվականին ՀԽՍՀ Գյուղատնտեսության նախարարության Երկրագործության գիտահետազոտական ինստիտուտում նա կազմակերպում է Հայաստանում կենսաֆիզիկայի բնագավառի առաջին գիտական լաբորատորիան և նույն տարում, Երևանի ֆիզիկայի ինստիտուտի տնօրեն ակադեմիկոս Ա.Ալիխանյանի հրավերով, այդ ինստիտուտում հիմնում է ճառագայթային կենսաֆիզիկայի լաբորատորիա, որն այնուհետև ղեկավարում է երկար տարիներ: Այդ ընթացքում, համատեղության կարգով, 1990-96 թթ. Ծ.Ավագյանն աշխատել է նաև ՀՀ կրթության և գիտության նախարարությունում արտաքին կապերի վարչության պետի պաշտոնում՝ մեծ ջանքեր ներդնելով նորաստեղծ հանրապետության և տարբեր պետությունների միջև գիտակրթական կապերի ստեղծման և զարգացման գործում:

Ծովակ Ավագյանը իրավամբ համարվում է կենսաֆիզիկայի հիմնադիրներից մեկը Հայաստանում: Նա հեղինակ է ավելի քան 200 աշխատությունների, այդ թվում՝ գիտական հոդվածներ և թեզիսներ, մենագրություններ, գիտահանրամատչելի հրապարակումներ, ունի հայտնագործությունների վեց հեղինակային վկայականներ՝ նվիրված ճառագայթային կենսաֆիզիկայի, սինքրոտրոնային ռադիոկենսաբանության, քեմիլյումինեսցենցիայի, կենսաթաղանթների հետազոտման տարաբնույթ հիմնահարցերին: Նա հետազոտել է ալիքի տարբեր երկարություններ ունեցող սինքրոտրոնային ճառագայթման ազդեցությունը օրգանիզմների վրա: Գերմանիայի Կարլսռուե քաղաքի ռադիոկենսաբանության ինստիտուտի և Մայնի Ֆրանկֆուրտ քաղաքի կենսաֆիզիկայի ինստիտուտի մասնագետների հետ համատեղ ԷՊՌ մեթոդի կիրառմամբ ուսումնասիրել է գամմա ճառագայթների ազդեցության տակ օլեինաթթվի ազատ ռադիկալային վիճակները: Հատկանշական են նաև Ծ.Ավագյանի և համահեղինակների կողմից կատարված այն հետազոտությունները, որոնց արդյունքում հաստատվեց լազերային ճառագայթման պաշտպանական ազդեցությունը տարբեր օրգանիզմների ռենտգենյան և ալֆա մասնիկներով ճառագայթման դեպքում: Նրա աշխատանքների առավել նշանակալի արդյունքները, որոնք վերաբերում են ռենտգենյան ճառագայթների ,տեսանելիությանը, տեղ են գտել ռադիոկենսաբանության դասագրքային գրականության մեջ: Ն.Հաջյանի հետ համատեղ Ծ.Ավագյանի ստեղծած քեմիլյումինեսցենցիայի չափման սարքը իրավամբ նորամուծություն էր գերթույլ լուսային ազդանշանների չափման ասպարեզում, որը հնարավորություն ընձեռեց այդ բնագավառում ուրույն ուսումնասիրություններ կատարելու:

Ծ.Ավագյանը զեկուցումներով բազմիցս հանդես է եկել արտասահմանյան գիտական կենտրոններում՝ Գերմանիայում, Անգլիայում, Ֆրանսիայում, Իտալիայում, ԱՄՆ-ում, Ճապոնիայում, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնության շատ քաղաքներում: Նրա անմիջական ակտիվ մասնակցությամբ Երևանում և Մոսկվայում կազմակերպվել են մի շարք միջազգային և միութենական գիտաժողովներ: Արժանահիշատակ է Ծ.Ավագյանի գործունեությունը նաև սփյուռքահայության շրջանում: Նա բազմիցս հանդես է եկել զեկուցումներով և հոդվածներով Իրանի Իսլամական Հանրապետությունում, Լիբանանում, Սիրիայի Արաբական Հանրապետությունում, Հորդանանում, Իսրայելում: Գրեթե քառորդ դար Ծ.Ավագյանը դասավանդել է Երևանի պետական համալսարանի կենսաբանության ֆակուլտետում՝ վարելով հատուկ դասընթացներ կենսաֆիզիկայի և կենսաքիմիայի ամբիոններում:

Ծ.Ավագյանը գիտակազմակերպչական գործունեությանը զուգընթաց նաև ակտիվ հասարակական գործիչ էր, հայրենասեր քաղաքացի: Դա առանձնապես ցայտուն դրսևորում ստացավ արցախյան ազատագրական պայքարի տարիներին: Դեռևս 1988 թվականին նա կազմակերպում է Երևանի ֆիզիկայի ինստիտուտի մի խումբ գիտնականների այցը Արցախ, ամուր կապեր հաստատում Լեռնային Ղարաբաղի տարբեր կազմակերպությունների և անհատների հետ: Կազմակերպում է օգնություն Ստեփանակերտի համալսարանին, բժշկական հիմնարկներին, ազատամարտիկներին: Գործարար մասնագետների է հրավիրում Արցախ Ավստրիայից, ԱՄՆ-ից, Գերմանիայից, Ֆրանսիայից, Սիրիայից: Արցախում Ծ.Ավագյանն ընտրվում է ,Ամարասե կազմակերպության անդամ, ակտիվ մասնակցություն ունենում ,Բժիշկներ առանց սահմանիե միջազգային կազմակերպության Ստեփանակերտի մասնաճյուղի ստեղծման գործում, դրանով իսկ նպաստելով Արցախ բերվող բժշկական օգնությանը, գործուն մասնակցություն ունենում նաև ԼՂՀ-ի Ինքնապաշտպանության Կոմիտեի ,Մարտիկ թերթի տպագրմանը:

Իր հայրենանվեր գիտակրթական և հասարակական գործունեության համար Ծովակ Ավագյանը բազմիցս արժանացել է մեդալների և պատվոգրերի: Ն.Վ. Տիմոֆեև-Ռեսովսկու ուսմունքի տարածման և սինքրոտրոն ճառագայթման վերաբերյալ աշխատությունների ցիկլի համար 1992 թվականին նա արժանացել է Ն.Վ. Տիմոֆեև-Ռեսովսկու անվան մեդալի, Հայաստանում Ամերիկյան համալսարանի կազմակերպման գործում ակտիվ մասնակցության համար՝ ՀԱՀ-ի մեդալի, Արցախի ազատագրման գործում ունեցած ավանդի համար՝ ԼՂՀ-ի նախագահի հուշամեդալի և այլն: Ծովակ Ավագյանը մեծաթիվ պարբերականների խմբագրական խորհուրդների անդամ է եղել, երկար տարիներ գործուն մասնակցություն ունեցել նաև ,Հայաստանի կենսաբանական հանդեսիե խմբագրական խորհրդի աշխատանքներին: Լինելով ,Սուրմալու-Իգդիրե Հայրենակցական միության փոխնախագահ, նա 2007 թվականին կազմել և տպագրության է հանձնել ,Սուրմալու-Իգդիր. պատմական քառուղիներումե ծավալուն գիրքը:

Նվիրյալ գիտնական և գիտության հմուտ կազմակերպիչ, ակտիվ հասարակական գործիչ և հայրենասեր քաղաքացի Ծովակ Մինասի Ավագյանի հիշատակը երկար տարիներ վառ կմնա նրան ճանաչողների սրտում:

,Հայաստանի կենսաբանական հանդեսիե խմբագրություն